

**ՕԽՏՆ ԱՆՊԵՐԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
բարձառ (խոսվածք)**

Մարթ ու կնիկ են ըլլում, օխտը տղա են ունենում, ախչիկ չեն ունենում: Մի օր էլ խտոր ընգնելու վախտն ա ըլլում, օխտը տղեն էլ վի են կենում, գնում ֆորսի:

Ասում են.— Նանի՛, թե ախչիկ կլի, ջահրեն կտերը դնիլ կտաս, ընդով մենք տուն կգանք, թե խու տղա կլի, լուծը կտերը դնիլ կտաս, ընդով էլ ոնչ տուն կգանք ոնչ էլա:

Խտոր ա ընգնում ախչիկ ա ըլլում: Մերներուն ասում ա.— Տարեք ջահրեն կտերը դրեք, իմ բալենին գան ուրխանան:

Էն տատմեր քյավթառը տանում ա ջահրի տեղ լուծն ա դնում կտերը: Ախպերտինքը գալիս են դաշտիցը մտիկ անում, տենում են լուծն ա կտորումը դրած, գլուխներուն առնում են ու եղ դառնում, գնում կորչում:

Էն ախչիկն էլ, ով տարով կմենձանա, նա օրով ա մենձանում, դառնում ա մի տասը տարեկան սիրուն ախչիկ: Գնում ա իրա թայդաշնու հետ խաղ անում:

Խաղ անելիս տեղը մինն ասում ա.— Իմ ախպոր արևը, մինն ասում ա.— Իմ ախպոր արևը:

Տենց օրթում են ուտում:

Էդ նաչարն էլ ասում ա.— Ես ախպեր չունիմ, ես էլ իմ հոր արևով օրթում կուտեմ:

Ասում են.— Ի՛, վայ քու գլխին, ով մինն ու էրկուսն ունի, դու խու օխտն ախպեր ունեիր, ո՞վ ինչ անե, որ գլխներուն առան, կորան քու հմար:

Գնում ա մորն ասում.— Նանի ջա՛ն, ես օխտն ախպեր եմ ունեցել, բա ո՞ր են:

Մերը լաց ա ըլլում ասում ա.— Բա ինչ ա բալա ջան, դուն օխտն ախպեր ունեիր, որ քեզանով խտոր ընգա, նրանք գնացին ֆորսի, ասին. «Թե մեզ քիր ըլի, ջահրեն դիր կտորումը, թե խու տղա կլի, լուծը դիր կտորումը, մենք էլ տուն չենք գալ»: Ես ջահրեն էի կտորումը դրել, հմա գիդեմ ոչ որ աչքերը քոռացածն ա տարել լուծը դրել, ջահրեն վի կալել: Էկել են հլբաթ դաշտիցը մտիկ արել, տեհել են լուծն ա, եղ են դառել, գնացել իմ նաչար բալենին:

Ասում ա.— Նանի ջա՛ն, ես գնալ տիմ իմ ախպրտոնցը գդնիլ:

Եդնա գնում ա մի դաշտի ծերի կանգնում, դես ա մտիկ անում, դեն ա մտիկ անում, տենում ա մի հեռու ծմակը մի ծուխ ա ըրեվում:

Ասում ա.— Կուզե սպանեն, կուզե մորթեն, գնալ տիմ էն ծուխը տենալ:

Գնում ա, գնում, գնում ա տենում, որ մի խողը ծմակը մի օթախ ա շինած: Նի յա մտնում, տենում ա մաի շախկենին տանը կախ արած, հմա միչին մարթ չկա:

Ասում ա. «Էս պտի ըլիլ իմ ախպորտանց տունը»: Կրակ ա անում, տուն ու դուռը թամզում ա, սրվիւմ ա, ամեն բան հազրում ա, իրա տեղն ա դնում, մսիցն էլ խորակ ա անում, հազրում, եդնա, ընդի մի դուլաք ա ըլլում, գնում ա մտնում մեչը:

Ըրիգունը օխտն ախպերն էլ տուն են գալի, մտիկ են անում, ասում են.— Տղեք, էս ո՞վ պտի ըլիլ էս վերանա ծմակի միչին:

Ման են գալի: դես ու դեն են մտիկ անում, բան չեն գդնում: Քնում են, ըռավողը վեր են կենում, մինը փասարը պիւմ ա, էն վեցը գնում են ֆորս անելու: Դա տանը շատ զարթուն կենում ա, քունը տանում ա, քնում ա: Էդ ախչիկը վի յա կենում, նհե հազրում ա, էլի մտնում ա դուլաքը:

Ըրիգունը ախպերտինքը գալիս են, տենում են գդել չի, չրանում են, ասում են.— Բա կարացիր ո՞չ տենաս, հլա եղ ով ա:

Ասում ա.— Ախպե՛ր, քնեցի, կարացի ոչ տենամ:

Էնա հմի էլ վենձի պուճուրն ա մնըմ, նա էլ ա նհենց քնըմ, կարըմ չի բռնի: Վերչը մինն էլա կարըմ չեն, հերթը հասնըմ ա չմնու պուճուրին: Նա մատը կտրըմ ա, աղ ա անըմ, քնըմ չի: Մին էլ տենըմ ա դուս էկալ, գնըմ ա որ բռնե, ուզըմ ա տապ անե:

Էնա բռնըմ ա, ասըմ ա.— Ո՞վ ես:

Էնա ասըմ ա.— Ճամփես կորցրել եմ, էկել եմ ըստի դուս էկել:

Նոր էնա դրան պիւրմ ա, ըրիգունը ախպերտինքը գալիս են, ասըմ են.— Մենք քիր չունինք, սա հազիր մեզ քիր կլի:

Էնա դրանք խնդաս ինչ խնդըմ են, ուրախանաս ինչ ուրխանըմ են, դրան ասըմ են.— Դե դու տանը կացի, դուս չի ըլիս, մենք գնանք ֆորս անենք, բերենք քի էլ պիւրեք, մենք էլ ապրինք: Իրանք եղ գնըմ են ֆորս անելու:

Շատ ա անց կենըմ, քիչ, օրի մի օրը մի բուլդի ա գալի (ես ինչ գիդեմ բուլդին ի՞նչ ա, հլբաթ ստանա ա, էլի՞), ասըմ ա.— Մաստակ տո՛ւ, ծամեմ:

Ասըմ ա.— Ունիմ ոչ:

Էնա Բուլդին փչըմ ա դրա կրակը հանգցնըմ: Նաչարը մնըմ ա սլարած. ասըմ ա.— Բա հմի ի՞նչ անեմ, ըրիգունն ախպերտինքս գալ տին, սոված մնալ: Դես ու դեն մտիկ ա անըմ, տենըմ ա՝ հրե մի հեռու տեղից ծուխ ա ըրեվըմ:

Ասըմ ա.— Գնալ տիմ կրակ բերիլ: Գնըմ ա տենըմ մի տուն, մի պառավ միջին նստած, ջահրա յա մանըմ:

Ասըմ ա.— Բարի օր քեզ, դեղի ջա՛ն:

Ասըմ ա.— Աստու բարին քեզ, բալա ջա՛ն, որ բարովդ ըլեր ոչ՝ քեզ ուտիլ տեի:

Էն գրողի տարածն ուշաք ա ըլըմ:

Ասըմ ա.— Դեղի՛:

Ասըմ ա.— Ի՞նչ ա:

Ասըմ ա.— Դեղի ջա՛ն, կրակ տաս:

Ասըմ ա.— Վո՛ւյ, հավքն իրա թևովը, օցն իրա պորտովը դեսն էկած չեր, բալա ջան, դուն եղ ո՞նց էկար: Դվեր արի, դվեր արի՝ կրակ տար, ախչիկ ջան:

Գնըմ ա, ասըմ ա.— Դե մոխիրը փեշդ ածա, շաղ տալով տար, որ իմ տղեն գա ոչ ասե, ըստի մարթի ֆոտ ա գալի, պիւր ես, թե չենամ ինձ կուտե:

Էնա էն եղատարն էլ ասըմ չի՝ մոխիրը մի տեղ վեր ածեմ: Հլա նհե շաղ տալով, չկել իրանց տուն տանըմ ա:

Դեռ նա տեղ հասած չի ըլըմ, ուշաքի տղեն գալիս ա մորն ասըմ.— Ըստի մարթի ֆոտ ա գալի, ասա, թե չե՝ քի կուտեմ:

Մերն ասըմ ա.— Հրե՛ մոխիրը շաղ տալով գնաց, գնա հասի եղնեն, ինչ ուզըմ ես արա:

Ասըմ ա.— Խի՞ թողեիր, ինձ հմա մի պատառ էլա կլեր: Եղնա գնըմ ա: Մաթը վրա հասնելիս ա ըլըմ, դա հասնըմ ա: Ախչիկը դրան տենըմ ա թե չե, ուշկը գնըմ ա, շեմքին էվետ վեր ա ընգնըմ:

Ուշաքը մտկըմը դնըմ ա դրան մի պատառ անե, տենըմ ա՝ դմադալի ձեն ա գալի:

Ասըմ ա.— Հլբաթ սրա ախպերտինքն են, էսա կգան, ինձ կսպանեն, թող անեմ մնա, էքուց կգամ, կուտեմ:

Ասըմ ա, եղ եղ ա դառնըմ, գնըմ ա: Ախպերտինքը գալիս են, տենըմ են ուշկը գնացած, ջուր են վրա տալի, ուշկը եղ են բերըմ:

Ասըմ են.— Էղ խի՞ տհե էլար: Ասըմ ա՝ բա սհե-սհե:

Դրանք չրանըմ են վրեն, ասըմ են.— Խի՞ գնեիր, վախեիր մենք կարենանք ո՞չ կրակ անենք:

Ասըմ ա.— Դե եսի՞մ, ասի կգաք սոված կմնաք:

Հմի էքսի օրը էն ուշաքը չե՞ գալ պտի:

Պուճուր ախպորը տանը թողըմ են, ասըմ են.— Դու նրա հախ դիվանն արա:

Դա բերըմ ա շեմքըմը մի վենձ ֆոր ա փորըմ, ձունձը վրեն ա գձըմ, քվորն ասըմ ա.— Դու դռանը մտիկ արա, որ գալիս ըլի՝ ինձ իմաց արա:

Ինքը տապ ա անըմ, հազիր կենըմ: Էնա մին էլ տենըմ ա՝ հրե ափալ-թափալ գալիս ա:

Ախպորն իմաց ա անըմ:

Ախպոր խոսքով քիրն ուշաբին ասըմ ա.— Կացի՛, ձունձը վեր ունիմ, կացի՛, ոտներդ ցեխոտ ա:

Ուշաբն անգաճ չի անըմ, հլե-նհե կընկած նի ա ընգնըմ տուն թե չէ, ձնձի հետ կլուվըմ ա, ֆորն ա ընգնըմ:

Ախպերը տապ արած տեղիցը դուս ա գալի, ասըմ ա.— Ձունձն ինձ տուր, քի հանեմ:

Էնա խափըմ ա ձունձն առնըմ, նրան թրով կտրատըմ ա, ֆողն ու քարը վրեն ա լքցնըմ, թաղըմ ա, կորցնըմ: Մի օր, էրկու օր— Էնա ուշաբի մերը գալիս ա դրանց կուշտը:

Ասըմ ա.— Իմ տղեն դեսն էկավ, տեղը շհանց տվեք:

Ասըմ են.— Չէ՛, դեսն էկել չի:

Դա դես ու դեն ֆոտոտ ա անըմ, գնըմ ա իրա տղի գոռի վրա, ասըմ ա.— Բս էս ի՞նչ ա, դուք նրան սպանել եք, ըտի թաղել, դե հմի դուք ինձ պիեցեք:

Ասըմ ա ու ըտի նստըմ:

Ախպերտինքը մին ուզըմ են դրան սպանեն, ռադ անեն, եղ ասըմ են.— Դա կնիկ արմատ ա, դա ինչ մեղք ունի, թող ապրի, իրան աջալովը մեռնի:

Եղնա ասըմ են.— Դեղի ջա՛ն, քու տղեն էր մեղավոր, որ նրան սպանեցինք, մենք ուզեինք ոչ ուրիշի արինն ընգնինք: Հմի փաթերակ ա, էլել ա, արի մեզ բախշե, բարըշինք, դու մեզ մեր իլ, մենք էլ քու ըրեխեքը, մեր կշտին կացի:

Դա դրանց կշտին կենըմ ա: Անց ա կենըմ միսելի վախտ, Էն գյուլլա դիրած Բուլդին եղ գալիս ա:

Ասըմ ա.— Ինձ մաստակ տվեք ծամեմ:

Ուշաբի մոր կշտին ըլըմ ա, հանըմ ա, տալի: Դա մաստակը վեր ա ունըմ, եղնա իրան բռով մին համեմի սերմը շաղ ա տալի ուշաբի գերեզմանի վրա, ու ինքը գնըմ: Համեմը դուս ա գալի, էղ գրողի տարած պառավը տանըմ ա գցըմ միսելի խորակի մեջը: Ըրիգունը ախպերտինքը գալիս են, ուտըմ են թե չէ, օխտն էլ դոչ են դառնըմ: Էն նաչարը լաց ա ըլըմ, մազերը փետըմ ա, հմա էլ նոր ի՞նչ տի անիլ:

Ասըմ ա.— Դեղի՛, դեղի՛, դու տանը կացի, էս տանիմ սրանց ըրածացնեմ:

Էնա տանըմ ա ըրածացնըմ, ըրիգունը եղ բերըմ ա տուն: Մի տղա մի օր գնըմ ա էղ ծմակը փետի: Գնըմ ա տենըմ մի հուրու-մալաք ախչիկ օխտը դոչ ա ըրածացնըմ:

Ասըմ ա.— Ա՛յ սիրուն ախչիկ, էղ խի՞ էս էս ծմակըմը մենակ դոչեր ըրածացնըմ:

Ասըմ ա.— Է՛հ, դարիբ ախպեր ջան, իմ բախտն էլ էս թավուր ա, էս բեբախտ էլել եմ, բեբախտ էլ մեռնիլ տիմ:

Ասըմ ա.— Խի՞, խի՞ էս տհենց ասըմ:

Նոր դա ասըմ ա.— Մհե՛, սհե՛, էս դոչերն իմ ախպերտինքն են, իմ խաթեր սրանք չոլերն էին ընգել: Սրանք ուզացել ին իմ նանը ախչիկ բերե, բերել ա, հմա չար մարթիբ լուձն են կտերը դրել, սրանք էլ գլուխներուն առել են, կորել: Ես չոլեչոլ ընգա, էկա իմ ախպորտանցը գղա, հմա ըստի էլ ուշաբն ու Բուլդին էս օյինը դրին մեր գլխին, ախպերտինքս խորակը կերան թե չէ, դոչ դառան:

Ըտի դոչերը նոր իմանըմ են, որ դա իրանց հալալ քիրն ա, միսկտըմ են, հմա նոր էլ ի՞նչ:

Էղ մարթն ըտի դրա վրա սեր ա գցըմ, ասըմ ա.— Դե էլ էս ծմակըմը կենալ մի, արի գնանք մեր տուն, էս քի էլ պահեմ, քու ախպորտանցն էլ:

Դրանք երկուսով էլ դռներն աղաք են անում, գալի: Յեխ, բաթլախ ճամփենով դրանք գալիս են, մի վարար ջրի վրա դուս գալի:

Ըտի էդ տղեն ասում ա.— Ղռչերը դուն ըրածացրու, ես գնամ իմ նանին ասեմ խորակ էփե, դռչերի հմար էլ մի եթաղ շինեմ ու գամ:

Դա որ գնում ա, էդ նաչարը բերում ա իրա ախպորտանցը կենդկենդ լեղացնում, ցեխերը վեր անում: Եղնա ինքն էլ շորերը հանում ա, որ լեղանա, հլե մտնում ա ջուրը թե չէ, մի կրակի էկած ախչիկ գալիս ա դրա շորերը հաքնում, իրան բոթում ա, գձում ջուրը: Դա ընգնում ա ջուրը, ինչքան չրչարվում ա որ դուս դա, կարում չի: Ջուրը դրան քշում ա, տանում գձում ծովը: Ծովումը դա ձուկն ա դառնում, աչկն ոչխարին կենում ա, իրա ախպորտանց սուքն ա անում:

Էն տղեն եդ եդ ա գալի, դրան ըտի ճնանչում չի, թե ուրիշ ա, հե գիդընում ա էդ նա ա: Ղռչերն աղաք են անում, տանում տուն: Եղնա էդ տղեն դրա հետ հրսանիք ա ըլում, ապրում են: Անց ա կենում մխելի վախտ, հմա էդ դռչերը ոնց են յանդումիշ ըլում, էլ ասելու ոչ:

Դրանք որ շատ կլավում են, դա իրան մարթին ասում ա.— Ջահլեններուս տարան, արի մնին մորթենք:

Դա էլ մտածում ասում ա, որ իրան քիրն ուզում ա.— Մորթենք, ես խի չեմ ուզիլ (էլօղլու շատ դարդն ա կտրե՞լ):

Ըտի չմնու պուճուր դռչը լիզու ա ըլում, մխկտալով գնում ա ծովի դրադն ու իրանց քվորը քոմագ ա կանչում, երգելով ասում ա.

Հուրեյ-մալաք, դուս արի,

Չարխու փալաք, դուս արի,

Էլօղլքերը սուրը սրել են,

Կրակի վրա ջուրը դրել են,

Մեր ավագ ախպորը մորթիլ տին...

Կրակի գա նա, իրա ախպոր ձենն ընգաճովն ա ընգնում թե չէ, լահլու ա տալի, չլխաչլխալով գալիս ա, որ մթամ քոմագ հասնի: Գալիս ա ծովի դրադը հասնում, իրան վրա ա անում, գցում ցամաքը թե չէ, շունչը տալիս ա (դե ձուկն առանց ջրի խի՞ պտի ապրիլ): Ընդիան եղը էդ

դռչերին կենդ-կենդ մորթում են, զխտըվում: Եղին դրանց տանի, ինչ անբախտ էլան, անբախտ էլ վերչացան էս ըշխարիցը: